2500	5	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 2510 + տող 2520 + տող 2530 + տող 2540 + տող 2550 + տող 2560), այդ թվում՝		68657,8	54957,8	13700,0
2510	5	1	0	Աղբահանում, որից՝		45257,8	45257,8	0,0
2511	5	1	1	Աղբահանում		45257,8	45257,8	0,0
				- Կոմունալ ծառայություններ	4213	45257,8	45257,8	0,0
2520	5	2	0	Կեղտաջրերի հեռացում, որից՝		10950,0	0,0	10950,0
2521	5	2	1	Կեղտաջրերի հեռացում		10950,0	0,0	10950,0
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	10950,0	0,0	10950,0
2560	5	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝		12450,0	9700,0	2750,0
2561	5	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		12450,0	9700,0	2750,0
				- Կոմունալ ծառայություններ	4213	9000,0	9000,0	0,0
				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	700,0	700,0	0,0
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	0,0	0,0	0,0
				- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	2750,0	0,0	2750,0
2600	6	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 3610 + տող 3620 + տող 3630 + տող 3640 + տող 3650 + տող 3660), այդ թվում՝		128780,3	55628,3	73152,0
2610	6	1	0	Բնակարանային շինարարություն, որից՝		23152,0	0,0	23152,0
2611	6	1	1	Բնակարանային շինարարություն		23152,0	0,0	23152,0
				- Շենքերի և շինությունների ձեռքբերում	5111	0,0	0,0	0,0
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	23152,0	0,0	23152,0
2640	6	4	0	Փողոցների լուսավորում, որից՝		66166,2	16166,2	50000,0
2641	6	4	1	Փողոցների լուսավորում		66166,2	16166,2	50000,0
				- Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211	6430,0	6430,0	0,0
				- Էներգետիկ ծառայություններ	4212	9236,2	9236,2	0,0
				- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	500,0	500,0	0,0
				- Ներքին վարկերի տոկոսավճարներ	4412	0,0	0,0	0,0
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	50000,0	0,0	50000,0

2660	6	6	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝		39462,1	39462,1	0,0
2661	6	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)ՍԲԵՍԳ		39462,1	39462,1	0,0
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	39462,1	39462,1	0,0
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	0,0	0,0	0,0
2700	7	0	0	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (տող 2710 + տող 2720 + տող 2730 + տող 2740 + տող 2750 + տող 2760), այդ թվում՝		0,0	0,0	0,0
2800	8	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2810 + տող 2820 + տող 2830 + տող 2840+ տող 2850 + տող 2860), այդ թվում՝		94663,4	56596,8	38066,6
2810	8	1	0	Հանգստի և սպորտի ծառայություններ, որից՝		1300,0	1300,0	0,0
2811	8	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ		1300,0	1300,0	0,0
				- Ներքին գործուղումներ	4221	0,0	0,0	0,0
				- Ներկայացուցչական ծախսեր	4237	1300,0	1300,0	0,0
2820	8	2	0	Մշակութային ծառայություններ, որից՝		93363,4	55296,8	38066,6
2821	8	2	1	Գրադարաններ		18345,2	18345,2	0,0
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	18345,2	18345,2	0,0
2823	8	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ		60018,2	25951,6	34066,6
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	25951,6	25951,6	0,0
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	34066,6	0,0	34066,6
2824	8	2	4	ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ		15000,0	11000,0	4000,0
				- Ներկայացուցչական ծախսեր	4237	11000,0	11000,0	0,0
				- Շենքերի և շինությունների կապիտալ մերանորոգում	5113	4000,0	0,0	4000,0
2900	9	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + տող 2930 + տող 2940+ տող 2950 + տող 2960 + տող 2970 + տող 2980), այդ թվում՝		126607,9	124607,9	2000,0
2910	9	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից՝		73267,8	73267,8	0,0
2911	9	1	1	Նախադպրոցական կրթություն		73267,8	73267,8	0,0
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	0,0	0,0	0,0
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	73267,8	73267,8	0,0
2950	9	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն, որից՝		53340,1	51340,1	2000,0
2951	9	5	1	Արտադպրոցական դաստիարակություն		53340,1	51340,1	2000,0
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	51340,1	51340,1	0,0
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	2000,0	0,0	2000,0

3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050+ տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), այդ թվում`		5800,0	5800,0	0,0
3020	10	2	0	Ծերություն, որից`		2800,0	2800,0	0,0
3021	10	2	1	Ծերություն		2800,0	2800,0	0,0
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ (տող 4534 + տող 4537 + տող 4538), այդ թվում`	4639	2800,0	2800,0	0,0
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից`		3000,0	3000,0	0,0
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		3000,0	3000,0	0,0
				- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	300,0	300,0	0,0
				- Այլ նպաստներ բյուջեից	4729	2700,0	2700,0	0,0
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում`		74804,8	74804,8	0,0
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից`		74804,8	74804,8	0,0
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		74804,8	74804,8	0,0
				- Պահուստային միջոցներ (Վարչ. բյ.)	4891	74804,8	74804,8	0,0
				- Պահուստային միջոցներ (ֆոնդային բյ.)	4891	0,0	0,0	0,0

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ-ԱՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի
ԹԻՎ 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի «Սպիտակի համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 62-Ա որոշման 1.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.1. Սպիտակի համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների այն աշխատողների համար, որոնց պաշտոնային դրույքաչափը սույն որոշմամբ սահմանված է 92 618 ՀՀ դրամ, 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված աշխատողների համար սահմանել 93 282 ՀՀ դրամ:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ -Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՈՒ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 67-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՓԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով և 13-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Սպիտակ համայնքի սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի «Սպիտակ համայնքի սանիտարական մաքրման սխեման և աղբահանության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 67-Ա որոշումը:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԻՏԵՄԱ

Համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը	Սանիտարական մաքրման ենթակա տարածքները	Սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները		Մեքենա-մեխանիզմների և սարքավորումների քանակը	Մեքենա-մեխանիզմների և սարքավորումների արժեքը	Սանիտարական մաքրման աշխատանքների և սարքավորումների արժեքը	Սանիտարական մաքրման աշխատանքների և սարքավորումների արժեքը
		Զախման միավորը	Ծավալը				
1. կենցաղային աղբ- 8315 խմ	Ավելի և լվացվող տարածքներ Ն. Աճեմյան փողոց, Թումանյան փողոց, Թորոսյան փողոց, Ալ. Մանուկյան-Ս. Ավետիսյան փողոցների խաչմերուկից մինչև Ն. Աճեմյան խաչմերուկ, Ալ. Մանուկյան (Նախկին ավտոկայանի հատված), Ալ. Մանուկյան 1-ին նրբանցք, Շահումյան փողոց , Ս. Ավետիսյան հրապարակ, Մյասնիկյան փողոց, Երկրաշարժի գոտերի հոշարձան, Ս. Ավետիսյան հրապարակի 2-նրբերի բակային տարածք, Ս. Ավետիսյան 7,15/1,15/2,17/1,17/2,17,19/1,19/2, Թորոսյան 26, Եվթեջու հարակից փողոց, Շիրակի փողոց, Առափնյա փողոց, Կենտրոն-1 թաղամաս, Կենտրոն-2 թաղամաս, Եռանկյունի թաղամասի բակային տարածք, Զբոսայգու աստիճաններ, Ալ. Մանուկյան փողոցից Մյասնիկյան փողոց տանող աստիճաններ.	խմ	8315	խմ	2757	Աղբատար փոխադրամիջոցը ապահովում է աղբի խտացումը, ունի կողքից կան հետնամասում կոնտեյներները բռնող հիդրակլիկ սարք: Տեսակավորված աղբը և սովորաբար արժեքները մեջ: Աղբահանությունն իրականացվում է օրեկան 2 արաթական գրաֆիկներով: Աղբակայրը մաքրվում, հարթեցվում և ծածկվում է հողի շերտով:	Սանիտարական մաքրման աշխատանքների և սարքավորումների արժեքը
2. շինարարական աղբ- 95 խմ		խմ	175	խմ	95		
3. ավելվածք -541,7 խմ		խմ	100	խմ	100		
4. խոշոր եզրաչափերի աղբ - 175 խմ		1000քմ	1384,22	կմ	800		
5. ոչ կենցաղային աղբ - 2757 խմ		1000քմ	3558,87	խմ	541,7		
6. տեսակավորված աղբի տեղափոխում- 100 խմ							
7. անծրևաջրատար առուների և բարդաբային զբոսայգու ջրավազանի տիղմ, ավագ-262,2 խմ							

<p>Այգեստան թաղամաս (4-րդ հիմն դպրոցի հարակից հատված և թունել), Ուլյան փողոց, Չարենցի փողոց, Պանրագործների թաղամաս, Վարպետաց թաղամաս, Տեր-Սիմոնյան փողոց Անձրևաջրադար առուներ Ուլյան փողոց- 680 մ Տաշիր թաղամաս-640մ Ալ.Մանուկյան փողոց-140մ Մյաննիկյան փողոց-450մ Թումանյան փողոց-541մ Պանրագործներ թաղամաս- 765մ Սայաթ-Նուվա փողոց-28մ Շահումյան փողոց-440մ Կայարանի կամուրջի տակ -80մ Եռանկյունի թաղամաս-170մ Այգեստան թաղամաս (4-րդ հիմն դպրոցի հարակից հատված) – 135մ Տեր-Սիմոնյան փողոց – 350մ Ս.Ավետիսյան թիվ 17 շենք – 100մ Վարպետաց թաղամաս – 12մ Առափնյա թաղամաս – 114մ Ս.Ավետիսյան Թիվ 7 շենք- 123մ Ուղեբեկական Կ-5 թաղամաս- 51մ</p>	<p>աղբի, տիրմի տեղափոխում</p>	<p>12145,9</p>	<p>Աղբավայրի խնամք-աղբի հարթեցում, հողով ծածկում</p>
--	-------------------------------	----------------	--

Ձմեռային մաքրման տարածքներ

Ձյան մաքրում մեքենայով	Ծավալը (քմ)	Ձյան մաքրում ձեռքով	Ծավալը(քմ)	Աղի, ավազի ցանում	Ծավալը(քմ)
Ն.Աճեմյան փողոց	4000	Ս: Ավետիսյան փողոց	2400	Ն.Աճեմյան փողոց	4000
Թումանյան փողոց	6000	Ս. Ավետիսյան հրապարակ /մասնակի/	1000	Թումանյան փողոց	6000
Թորոսյան փողոց	4500	Թորոսյան փողոց	1100	Թորոսյան փողոց	4500
Ալ.Մանուկյան-Ս.Ավետիսյան փողոցների խաչմերուկից մինչև Ն.Աճեմյան խաչմերուկ	900	Ալ.Մանուկյան 1-ին նրբանցք	600	Ալ.Մանուկյան-Ս.Ավետիսյան փողոցների խաչմերուկից մինչև Ն.Աճեմյան խաչմերուկ	900
Ալ.Մանուկյան 1-ին նրբանցք	3000	Շահումյան փողոց (հուշարձանի դիմացի հատված)	400	Ալ.Մանուկյան 1-ին նրբանցք	3000
Շահումյան փողոց (հուշարձանի դիմացի հատված)	1400	Շահումյան փողոց (Յանուկովիչի հրապարակից մինչև Երաժշտական դպրոց)	1600	Շահումյան փողոց (հուշարձանի դիմացի հատված)	1400
Շահումյան փողոց (Յանուկովիչի հրապարակից մինչև Երաժշտական դպրոց)	9600	Երկրաչարժի զոհերի հուշարձան	400	Շահումյան փողոց (Յանուկովիչի հրապարակից մինչև Երաժշտական	9600

Մյասնիկյան փողոց	2800	Ավ. Մանուկյան փողոց (Շահումյան փողոցի սկզբնամասից մինչև Երկաթգիծ)	400	դպրոց)	2800
Շիրակի խճուղի	5000	Ավ. Մանուկյան փողոց (Շահումյան փողոցի սկզբնամասից մինչև Ա. Ավետիսյան փողոցի սկզբնամաս)	260	Շիրակի խճուղի	5000
Վարպետաց թաղամասի մուտքը և Երիտասարդական փող.	17000	Վարպետաց թաղամասի մուտքը և Երիտասարդական փողոց	4900	Վարպետաց թաղամասի մուտքը և Երիտասարդական փող.	17000
Իտալական և Շվեյցարական թաղամասերի գլխավոր փողոց	7000	Զբոսայգու աստիճաններ	900	Իտալական և Շվեյցարական թաղամասերի գլխավոր փողոց	7000
Ուղբեկական թաղամաս	15000	Առաջին դպրոց տանող աստիճաններ	200	Ուղբեկական թաղամասի գլխավոր փողոց	5000
Չարենցի փողոց	10000	Քաղաքապետարանի բակ	500	Չարենցի փողոց	10000
Էստոնական թաղամաս	6000	Երևանյան խճուղու վրա գտնվող ավտոմեքանիքներ /թվով 9	450	Էստոնական թաղամաս	6000
Բանավան թաղամաս	16000	Պանրագործների թաղամաս	780	Ուկրաինական թաղամաս	3400
Փյունիկ թաղամաս	3500	-		Պանրագործների թաղամաս	1100
Տաշիր թաղամաս	2500	-			
Գր. Լուսավորիչ թաղամաս	8000	-			
Փերմանական թաղամաս	2500	-			
Ուկրաինական թաղամաս	3400	-			
ԸՆԴԱՄԵՆԸ	128100	-	15890		86700

ԿԱՐԳ ԱՂՔԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով կարգավորվում են Սպիտակ համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է Սպիտակ համայնքի ղեկավարի, Սպիտակ համայնքի ավագանու, աղբահանության կազմակերպման պատասխանատուների, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական անձանց, Սպիտակ համայնքի բնակիչների, ժամանակավոր բնակիչների, աղբահանության ծառայություն մատուցող անձանց վրա:

3. Աղբահանությունը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանք է, օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ: Աղբի հավաքման, հեռացման, փոխադրման, պահման, աղբավայրերի շահագործման հսկողությունը իրականացնում է համայնքի ղեկավարը:

4. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ պետք է.

ա) նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական /վտանգավոր/ ներգործությունը,

բ) ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ,

գ) աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը:

2. Աղբի հավաքման, պահման, աղբամանների տեղադրման վայրերը

5. Կենցաղային աղբը հավաքվում և (կամ) պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի տրամադրած տարողություններում՝ աղբամաններում հնարավորինս ապահովելով սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջները:

6. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15մ և ոչ ավելի, քան 100մ հեռավորության վրա: Պուրակներում, զբոսայգիներում աղբամանները տեղադրվում են մարդկանց զանգվածային կուտակման վայրերից ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա: Հանգստի գոտիներում աղբամանները տեղադրվում են 3500-4000մ² մակերեսին 1 աղբաման հաշվարկով:

7. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերի բակային կամ միջբակային տարածքներում՝ փոխադրամիջոցի մոտեցման համար հարմար դիրքով,

ջրանթափանց, հարթ, բարեկարգ մակերեսով հարթակների վրա: Աղբամանները չեն տեղադրում փողոցների մայթերի և սիզամարգերի վրա:

8. Աղբամանները աղբով լցվում են ծավալի երկու երրորդից ոչ ավելի մակարդակով:

9. Սպառման թափոնները փոխադրվում են աղբատար փոխադրամիջոցներով, որոնց կառուցվածքը բացառում է (փակ թափքերով) շրջակա միջավայրի աղտոտումը:

10. Աղբատար փոխադրամիջոցի կառուցվածքը ապահովում է աղբի խտացումը, ունենում է կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք:

11. Սպառման թափոնների փոխադրումը (աղբահանությունը) իրականացնում են մասնագիտացված կազմակերպությունները՝ համաձայն աղբահանության սխեմաների:

12. Կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից մաքրվում և տեղափոխվում է կոնտեյներների հարակից տարածքի աղբը: Աղբահանության ժամանակ տեղափոխում են նաև աղբակույտերը և տերևակույտերը, դրանց այրումը արգելվում է:

13. Աղբատար փոխադրամիջոցների թափքերը ախտահանվում են աղբաթափման վայրում՝ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից՝ ախտահանիչ լուծույթներով:

14. Աղբահավաք կոնտեյներները լվացվում և ախտահանվում են ամիսը 1 անգամ՝ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից, ախտահանման համար օգտագործվում է քլորակրի (10 %), լիզոլի (5-8%) կրեոլինի (5-8%), նավթալիզոլի (10-15%), ֆենոլի (3-5%) նատրիում մետասիլիկատի (1-3%) կամ Հայաստանի Հանրապետության «Դեղերի մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման կարգը հաստատելու մասին» թիվ 581 որոշմամբ սահմանված կարգով ներմուծված վարակազերծիչ միջոցներով, ըստ վերջիններիս ուղեկցող հրահանգների:

15. Աղբամանները տեղադրվում են ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, առևտուր իրականացնող օբյեկտների մուտքերի մոտ, զբոսայգում, պուրակներում, կայարանում, շուկայում, հանգստի գոտիներում և այլն:

16. Կրպակներում առևտուր իրականացնող սուբյեկտները իրենց հարակից տարածքները պահում են պատշաճ սանիտարական վիճակում, որտեղ չեն պահեստավորում ապրանքներ, տարաներ կամ ավելորդ իրեր, սպառման թափոններ և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ:

17. Բնակելի շենքերի առաջին հարկերում տեղակայված առևտրի և սպասարկման օբյեկտների մուտքերի (այդ թվում և՛ բակային կողմից) հարակից տարածքները պահվում են պատշաճ սանիտարական վիճակում, չեն կուտակում ապրանքների արկղեր կամ ավելորդ իրեր, սպառման թափոններ և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ:

18. Սպառման թափոնների թաղումը (տեղադրումը) և վնասագերծումը իրականացվում է հատուկ հատկացված տեղերում՝ սպառման թափոնների աղբավայրերում:

19. Աղբը տեղադրվում է փաստացի գործող աղբավայրում:

20. Փաստացի գործող աղբավայր՝ աղբավայր, որի շահագործման համար չկա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված թույլտվություն, սակայն որպես աղբավայր փաստացի շահագործվում է դեռևս 1970-ական թվականներից, (0126-0034 կադաստրային ծածկագիրը ՀՀ կառավարության 1054 որոշմամբ նպատակային նշանակությունը աղբավայր) և վերահսկվում է տեղական ինքնակառավարման մարմինի կողմից:

21. Չի թույլատրվում՝

ա) աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում,

բ) սպառման թափոնների այրումը,

գ) աղբի համար նախատեսված վայրերում տեղադրելու անօգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, ասբեստ կամ նմանատիպ այլ վտանգավոր նյութեր ու թափոններ:

դ) աղբի համար նախատեսած վայրում տեղադրելու սատկած կենդանու մարմին:

22. Սատկած կենդանու մարմինը պետք է արագորեն հեռացվի քաղաքի՝ առողջապահության պատասխանատուի ցուցումով: Եթե սատկած կենդանու տերը հայտնի է, ապա հեռացումն իրականացվում է նրա կողմից, իսկ եթե տերը հայտնի չէ, ապա՝ համայնքապետարանի պահանջով՝ աղբահանություն իրականացնողի կողմից:

ԱՂԲԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԳՐԱՖԻԿ

Փողոցների, թաղամասերի անվանումը	Աղբարկղերի քանակը	Շաբաթվա օրեր						
		1	2	3	4	5	6	7
Թումանյան փողոց	10		■				■	
Սայաթ-Նովա փողոց	6		■				■	
Պանրագործներ թաղամաս	8		■				■	
Քըրք-Քրքոյան փողոց	15		■				■	
Գերմանական թաղամաս	3		■				■	
Բանավան թաղամաս	4		■				■	
Տաշիր թաղամաս	6	■			■			
Առափնյա թաղամաս	16		■				■	
Մուրացան, Տեր-Սիմոնյան փողոցներ, Շիրակի և Վանաձորի խճուղիներ, Փյունիկ և Օղկայան թաղամասեր	46	■				■		
Ս. Ավետիսյան փողոց և Ս.Ավետիսյան հրապարակ	35			■			■	
Ալ. Մանուկյան փողոց և ավտոկայան	8			■			■	
Աճեմյան փողոց	6			■			■	
Շահումյան փողոց (հուշարձանի դիմացի 4 աղբարկղ), Կ-1 թաղամաս (13աղբարկղ), Ս.Ավետիսյան փողոց (7աղբարկղ), Ալ.Մանուկյան փողոց (2աղբարկղ) (ներառյալ մայթեզերերին տեղադրված փոքր աղբարկղերը)	26	■	■	■	■	■	■	
Շահումյան, Ուփյան, Խնկոյան, Չարենց փողոցներ, Գործարանային թաղամաս	33			■			■	
Շվեյցարական թաղամաս	16	■			■			
Իտալական թաղամաս	11	■			■			
Էստոնական թաղամաս	7	■			■			
Գրիգոր Լուսավորիչ թաղամաս	10	■			■			
Ուգրեկական թաղամաս	20	■			■			

Նորվեգական թաղամաս	5	■		■		
Վարպետաց թաղամաս	14	■		■		
Այգեստան թաղամաս	44	■			■	
Մյասնիկյան փողոց	9		■		■	■
Տեսակավորված աղբի տեղափոխում	18	ամիսը մեկ անգամ				

Սանիտարական մաքրման իրականացման նվազագույն ժամանակացույցը

h/h	Մաքրվող փողոցների, հրապարակների, հուշարձանների և զբոսայգիների անվանումը	Մքենայական մաքրման ենթակա փողոցների երկարությունները մ	Մաքրվող փողոցների, երկարությունները մ/ մակերեսը քմ	Մաքրվող մայրերի մակերեսները քմ	Շաբաթվա օրեր								
					I	II	III	IV	V	VI	VII		
1	Ն. Աճեմյան փողոց	-	468մ/1404քմ	1126քմ	///								
3	Թումանյան փողոց	-	780մ/3120քմ	984քմ		///							
4	Թորոսյան փողոց	370մ	170մ/510քմ	2190քմ	///	///	///	///	///				
5	Ալ. Մանուկյան-Ս. Ավետիսյան փողոցների խաչմերուկից մինչև Ն. Աճեմյան խաչմերուկ	100մ	-	-	///	///	///	///	///				
	Ալ. Մանուկյան (նախկին ավտոկայանի հատված)	-	150մ/1300քմ	-	///					///			
6	Ալ. Մանուկյան 1-ին նրբանցք	300մ	-	1233քմ	///	///	///	///	///	///			
7	Շահումյան փողոց	550մ	414մ/1242քմ	4884քմ	///					///			
9	Ս. Ավետիսյան հրապարակ	-	-	3540քմ	///					///			
10	Մյասնիկյան փողոց	-	310մ/1240քմ	1860քմ						///			
11	Երկաշարժի գոհերի հուշարձան	-	-	990քմ	///								
	Ս. Ավետիսյան հրապարակի շենքերի բակային տարածք	-	200մ/400քմ	-							ամիսը 2 անգամ		
	Ս. Ավետիսյան 7,15/1,15/2,17/1,17/2,17,19/1,19/2, Թորոսյան 26, Եվեղեցու հարակից փողոց	640մ	-	-							ամիսը 2 անգամ		
14	Շիրակի փողոց	-	680մ/2720քմ	1620քմ							ամիսը 2 անգամ		
16	Մտափնյա փողոց	-	750մ/1125քմ	-							ամիսը 2 անգամ		
17	Կենտրոն-1 թաղամաս	-	750մ/1500քմ	440քմ							ամիսը 2 անգամ		
19	Կենտրոն-2 թաղամաս	-	500մ/1000քմ	-							ամիսը 2 անգամ		
20	Եռանկյունի թաղամասի բակային տարածք	204մ	-	-							ամիսը 2 անգամ		
21	Զբոսայգու աստիճաններ	-	-	900							ամիսը 2 անգամ		

22	Այ.Մանուկյան փողոցից Մյասնիկյան փողոց տանող աստիճաններ	-	-	130	ամիսը 2 անգամ
23	Այգեստան թաղամաս (4-րդ հիմն դպրոցի հարակից հատված և թունել)	-	130մ/520քմ	480քմ	ամիսը 2 անգամ
24	Ուխյան փողոց	-	580մ/870քմ	-	ամիսը 2 անգամ
	Չարենցի փողոց	-	640մ/1280քմ	-	ամիսը 2 անգամ
25	Պանդազդոճների թաղամաս	-	200մ/600քմ	624քմ	ամիսը 2 անգամ
27	Վարպետաց թաղամաս	3500մ	-	4125քմ	ամիսը 1 անգամ
	Տեր-Սիմոնյան փողոց	1250մ	-	1030քմ	ամիսը 1 անգամ
28	Անձրևաջրատար առուների մաքրում		4819մ		Տարին 21 անգամ
29	Քաղաքային գրոսայգու ջրավազանի մաքրում, վացում		7200քմ		4 անգամ Ապրիլ, հունիս, օգոստոս, հոկտեմբեր ամիսներին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ՝ ՈՒԶԲԵԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ « քաղաք Սպիտակ, Ուզբեկական թաղամաս, թիվ 25» հասցեում գտնվող 2888 քառակուսի մետր մակերեսով հյուրանոցը և դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 06-006-0184-0012 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,755 հեկտար մակերեսով հողամասը դասական աճուրդով օտարելուն:

2. Անշարժ գույքի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 128 263 292 ՀՀ դրամ:

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի չափագրման և պետական գրանցման ծախսերը:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ
ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Շահումյան փողոց, թիվ 73 հասցեում գտնվող՝ Գագիկ Ռոբերտի Ղորոխյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0508-0019 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության 0,05166 հեկտար մակերեսով հողամասին կից Սպիտակ համայնքի Շահումյան փողոց, թիվ 73/2 հասցեում գտնվող 06-006-0508-0036 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,001659 հեկտար մակերեսով հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ, 4-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով Գագիկ Ռոբերտի Ղորոխյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Շահումյան փողոց, թիվ 73 հասցեում գտնվող՝ Գագիկ Ռոբերտի Ղորոխյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0508-0019 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության 0,05166 հեկտար մակերեսով հողամասին կից Սպիտակ համայնքի Շահումյան փողոց, թիվ 73/2 հասցեում գտնվող 06-006-0508-0036 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,001659 հեկտար մակերեսով հողամասը ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի կադաստրային գնի չափով՝ 1քմ 2887,5 ՀՀ դրամ:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՆՎԱԾ ԱՎԼՈՂ, ՓՈՇԵԿՈՒԼ ՄԵՔԵՆԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համաձայնություն տալ 2020 թվականի հուլիսի 20-ին կնքված Սպիտակ համայնքի կարիքների համար գրեյդերի և ավլոդ, փոշեկուլ մեքենայի մատակարարման գնման թիվ ՀՀ ԼՄՍԿ-ԳՀԱՊՁԲ-20/23 պայմանագրով սեփականության իրավունքով ձեռք բերված HUAXIN ELECTRIC S4001 մակնիշի ավլոդ, փոշեկուլ մեքենան պետական գրանցում կատարելու և հաշվառելու:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

«ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով և 9-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող SDLG G9190F մակնիշի գրեյդերը և HUAXIN ELECTRIC S4001 մակնիշի ավտո, փոշեկուլ մեքենան անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Սպիտակի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը: